Ձորագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս):


Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև հատվածներում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում մայիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 48. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 49. Փամբակ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները





Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրյություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը և նկատվել է կայուն վիճակ՝ ծախսի աննշան ավելացումով: Հաղարծինի N2058 դիտակետում մայիսին կատարվել է որակի մոնիթորինգ:



Գծապատկեր 53. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյություններում ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Բաղարներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▲ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտությանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ախտությանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտության	Ախտրիկ	11.8	15.7	75	6.55	11.5	57	3.19	6.41	50
Մեծամոր	Մեծամոր	5.47	29.5	19	2.31	20.5	11	2.27	15.2	15

Մակերևութային ջրերի որակ


Ախտությանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախտության գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրի քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գյումրիից ներքև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Բազարան գյուղից ներքև հատվածում հունիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գրուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ապրիլին և մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 54. Մեծամոր գետում ֆոսֆատ խոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 40 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի N105, N108, N198, N1521, N1533, N1537, N2001, N2002, N2018, N2021, N2024, N2025, N2026, N2055 և N2057 դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ մինչև 0.26լ/վ, մակարդակի իջեցումներ մինչև 0.4մ: N152 և N192 դիտակետերում, որտեղ նկատվել են առավելագույն իջեցումները, դիտարկումները կատարվել են պոմպի աշխատանքի ժամանակ:




Մակարդակի աննշան իջեցումներ են նկատվում նաև Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2080 (Արագածավան), N2082 (Մյասնիկյան) դիտակետերում, իսկ N2081 (Արտենի) և N2083 (Արտամետ) դիտակետերում նկատվել է կայուն վիճակ բարձրացման միտումով:


Շիրակի մարզի դիտակետերում հիմնականում նկատվում է աղբյուրների ծախսերի ավելացում: Աշոցքի N2038, N2039 դիտակետերի աղբյուրներում նկատվել է ծախսի ավելացում, իսկ Աշոցքի N2040 և Ցողամարզի N2077 դիտակետերում՝ ծախսի համեմատաբար կայուն վիճակ: Առափիի N2042, Ախուրյանի N2043 դիտակետերի ջրհորներում նկատվել է ջրի մակարդակի իջեցում 0.2մ-ով:

Ախուրյանի ՋԿՏ-ի 19 դիտակետում մայիս և հունիս ամիսներին կատարվել է որակի մոնիթորինգ: Արտամետի N2083 հորատանցքի հանքայնացման, Ակնաշենի N2055 հորատանցքի կոշտության պարունակությունները գերազանցում են ՍԹԿ-ները: Լուսազյուղ N2022 և Ապագա N2020 գրունտային ջրհորներում կոշտության պարունակությունը գերազանցում է ՍԹԿ-ն, ինչը կրում է բնական բնույթ:




Գծապատկեր 55. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները






Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները





Գծապատկեր 60. Ախուրյանի ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման պարունակությունը



Գծապատկեր 61. Ախուրյանի ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատների պարունակությունը

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	15.3	20.1	76	22.3	28.0	79	11.6	11.9	97
Հրազդան	Արգել	4.87	8.03	61	5.19	7.79	67	4.07	4.43	92
Հրազդան	Երևան	9.38	18.2	52	2.69	11.8	23	3.12	3.65	86
Մարմարիկ	Հանքավան	3.47	4.00	87	7.08	7.66	92	1.53	3.37	45
Մարմարիկ	Աղավնաձոր	11.1	12.1	92	19.4	19.9	97	10.6	9.46	112
Քասախ	Վարդենիս	2.32	3.88	60	1.49	3.37	44	0.54	1.76	31
Քասախ	Աշտարակ	6.17	7.16	86	4.88	3.69	132	5.10	3.39	151

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Աշտարակ քաղաքից վերև հատվածում ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Շաղվարդ գետի ջրի որակը Փարմալի գյուղից ներքև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Արգել գյուղից ներքև ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Գետառ գետի ջրի որակը գատաբերանում մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 62. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 63. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 64. Հրազդան գետում ֆուֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 32 դիտակետերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Արարատյան արտեզյան ավազանի տարածքի (Մասիս, Դաշտավան, Սիս, Հայանիստ, Հովտաշեն), N1519, N1526, N1535, N1536, N2008 և N2053 դիտակետերում նկատվել է ստորերկրյա ջրի ծախսի իջեցումներ մինչև 1.23/վ: Դիտակետերից համեմատաբար կայուն ծախս ունի N2007 Ջրահովիտի շատրվանող հորատանցքը:

Մակարդակի աննշան իջեցումներ են նկատվում նաև Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 (Արագած), N2086 (Դոդա), N2087 (Աղավնատուն), N2088 (Լեռնամերձ) և N2089 (Կարբի) դիտակետերում:


Հրազդան գետավազանի N246 (Բջնի) դիտակետում նկատվում է ծախսի կտրուկ ավելացում, N1832 դիտակետում, որը իրենից ներկայացվում է ձորակի դրենաժային ջուր, կապված մթնոլորտային տեղումների առկայության հետ նկատվել են ծախսի կտրուկ ավելացումներ:

Նիգավանի N2010 և N2011 ջրհորերում նկատվում է գրունտային ջրերի մակարդակի բարձրացում: Արարատյան արտեզյան ավազանի N2023 (Խորոնք) դիտակետում, որը իրենից ներկայացնում է գրունտային ջրհոր, նկատվում է մակարդակի բարձրացում կապված ոռոգման շրջանի հետ: Ապարանի N2051 «Սիրո» աղբյուր դիտակետում նկատվել է ջրի ծախսի ավելացում 1.0/վ-ով:


Հրազդանի ՋԿՏ-ի 11 դիտակետում մայիս և հունիս ամիսներին կատարվել է ջրի որակի մոնիթորինգ: Ջրահովիտի N2007, Հովտաշենի N2053, Մասիսի N1519 շատրվանող հորատանցքում կոշտության և հանքայնացման պարունակությունները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները:




Գծապատկեր 65. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյունների ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 66. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 67. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 68. Հրազդանի ՋԿՏ-ի շշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 69. Հրազդանի ՋԿՏ-ի շշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 70. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները






Գծապատկեր 71. Հրազդանի ՋԿՏ-ի զննարկված հանքայնացման պարունակությունը



Գծապատկեր 72. Հրազդանի ՋԿՏ-ի զննարկված նիտրատների պարունակությունը

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▲ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովազուղ	5.66	4.21	134	4.58	4.25	108	1.39	1.53	91
Մասրիկ	Ծովակ	3.47	5.23	66	4.42	6.26	71	2.45	3.80	64
Մարտունի	Գեղհովիտ	1.26	1.80	70	3.98	4.81	83	5.61	5.46	103
Արգիճի	Վ. Գետաշեն	9.68	14.6	66	11.3	20.8	54	3.89	9.50	41
Գավառագետ	Նորատուս	4.79	4.98	96	4.24	6.55	65	3.96	4.44	89

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 73. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 74. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 75. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Ակունքի N31 և N902 դիտակետերում նկատվել են ծախսի կտրուկ ավելացումներ, որոնք մասամբ պայմանավորված են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ջրառի քանակով և դրա բացթողումներով: Խաչաղբյուրի N2093 աղբյուրում, Գանձակի N2013 շատրվանոց հորատանցքում նկատվել են ծախսի աննշան փոփոխություններ՝ իջեցման և բարձրացման միտումով:

Վարդենիսի և Դարանակի շատրվանոց հորատանցքերում (N1810, N1812 և N2095), Ակունքի N1053 աղբյուրում նկատվել են ստորերկրյա ջրի ծախսի բարձրացումներ: Վարդենիսի N1811 դիտակետում ծախսը կայուն է:


Սևանի ՋԿՏ-ի 7 դիտակետում մայիս և հունիս ամիսներին կատարվել է որակի մոնիթորինգ: Հանքայնացման, կոշտության արժեքները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 76. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները

Հատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 77. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները

Հատրվանող հորատանցքեր
Ծախս, լ/վ


Սևանի ՋԿՏ




Գծապատկեր 78. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ծախսերի փոփոխությունները

Հատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 79. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 80. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման պարունակությունը



Գծապատկեր 81. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատների պարունակությունը

Սևանա լիճ

2022 թվականի 2-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 13. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2022 թվականի 2-րդ եռամսյակում
Ապրիլ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվ ա ընթաց - քում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	23.27	33.35	34.43	91.05	42.0	129.7	320.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	8.44	15.86	17.32	41.62	1.60	31.8	56.3
Տեղումները լճի մակերևույթի վրա	16.2	3.20	5.10	24.5	19.1	55.4	118.2
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	2.80	5.60	7.90
Ընդամենը	50.51	55.01	59.45	164.97	103.6	215.6	379.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	7.86	89.0
Գոլորշացում լճի մակերևույթից	4.30	8.80	7.40	20.5	3.40	39.8	106.0
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.40
Ընդամենը	4.70	9.20	7.80	21.7	3.80	49.9	121.5
Կուտակում (նվազում)	25.5	12.8	38.2	76.5	0.00	157.7	288.3
Բացարձակ անկապք	20.31	33.01	13.45	66.77		8.30	
Հարաբերական անկապք %	40.2	60.0	22.6	40.5	0.10	5.00	18.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.45	1278.035	38.1130
Ամսվա վերջին օրը	1900.51	1278.606	38.1895
Միջին ամսական	1900.48	1278.320	38.1513

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

0.06 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.22 30.04.22 ընթացքում

0.08 (մ)

30.04.22 և 30.04.21 մակարդակի տարբերությունը

-0.23 (մ)

Մայիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	40.91	34.57	38.74	114.22	74.3	182.7	341.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	16.65	17.11	18.83	52.59	1.70	44.4	63.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	44.2	30.7	23.3	98.2	33.4	71.5	131.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	3.30	5.70	7.90
Ընդամենը	104.36	84.98	83.57	272.91	165.3	288.5	463.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	12.2	94.6
Գոլորշացում լճի մակերևույթից	11.7	15.2	26.0	52.9	23.0	53.0	82.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	12.1	15.6	26.4	54.1	24.0	67.1	144.8
Կուտակում (նվազում)	63.9	64.2	115.5	243.6	25.8	221.3	454.6
Բացարձակ անկապք	28.36	5.18	-58.33	-24.79		1.30	
Հարաբերական անկապք %	27.2	6.10	41.1	8.33	0.10	4.60	22.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.51	1278.606	38.1895
Ամսվա վերջին օրը	1900.70	1280.406	38.4331
Միջին ամսական	1900.60	1279.459	38.3047

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում
 Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.05.22 ընթացքում
 31.05.22 և 31.05.21 մակարդակի տարբերությունը

0.19 (մ)
 0.27 (մ)
 - 0.20 (մ)

Հունիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	31.00	23.72	17.67	72.39	36.6	109.39	225.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	15.98	7.37	4.41	27.76	0.00	34.7	55.7
Տեղումները լճի մակերևույթի վրա	7.30	17.0	30.0	54.3	4.80	71.9	136.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	3.00	5.70	7.80
Ընդամենը	56.88	50.69	54.68	162.25	76.28	209.5	355.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	6.80	15.21	12.85	34.86	0.18	46.2	120.9
Գոլորշացում լճի մակերևույթից	29.7	26.5	32.9	89.1	36.9	90.3	153.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	36.90	42.11	46.15	125.16	65.6	136.5	222.5
Կուտակում (նվազում)	38.5	25.6	-25.7	38.5	-128.4	77.8	240.7
Բացարձակ անկապ	-18.52	-17.02	34.23	-1.41		-4.50	
Հարաբերական անկապ %	24.6	25.1	42.6	0.86	0.40	4.70	30.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.71	1280.501	38.4459
Ամսվա վերջին օրը	1900.74	1280.785	38.4844
Միջին ամսական	1900.75	1280.879	38.4973

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

0.03 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.22 30.06.22 ընթացքում

0.31 (մ)

30.06.22 և 30.06.21 մակարդակի տարբերությունը

-0.06 (մ)


2022 թվականի ապրիլի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.45մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 18 սմ-ով: 2022 թվականի հունիսի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.74մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 6սմ-ով: 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը լճի մակարդակը բարձրացել է 29 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը ապրիլ ամսին կազմել է 41.621 մլն մ³, մայիսին՝ 52.592 մլն մ³, հունիսին՝ 27.760 մլն մ³:


2022 թվականի ապրիլի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.035 կմ², ծավալը՝ 38.1130 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ հունիսի 30-ին համապատասխանաբար՝ 1280.501 կմ² և 38.4459կմ³:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (*Աղյուսակ 14*):


Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.




Գծապատկեր 82. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 83. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 84. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 85. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 86. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 87. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 14. Սևանա լճի ջրի որակը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ

Մայիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	Բոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	Բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտ- րիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ



Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 80մ խորություն	Բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	

Հունիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, երկաթ, բոր, ԼԱՍ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, երկաթ, բոր, ԼԱՍ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, երկաթ, բոր, ԼԱՍ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, բոր, ԼԱՍ,	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան, բոր	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼԱՍ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼԱՍ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼԱՍ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն,, ֆոսֆատ իոն, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 30մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Բոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	



ՀՀ Սեանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Ֆեոտային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սեանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«միջանք»	
4-րդ	«սնդուս/սքուս»	
5-րդ	«վատ»	



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	5.80	7.70	75	9.12	12.3	74	5.35	9.29	58
Վեդի	Ուրցաձոր	4.42	4.50	98	4.65	6.84	68	0.32	2.16	15
Արփա	Ջերմուկ	4.00	6.26	64	6.29	18.7	34	3.90	11.4	34
Արփա	Արենի	24.0	30.5	79	29.0	50.6	57	9.55	25.7	37

Մակերևութային ջրերի որակ

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Արարատ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հերհեր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 88. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր



Արարտյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնադրություն, , որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Մալիշկա (N502), Եղեգնաձոր (N787), Կեչուտ (N2060) բնակավայրերի դիտակետերում նկատվել են ծախսի կտրուկ ավելացումներ, ինչը կրում է բնական բնույթ: Ագարակաձորի (N785) դիտակետում նկատվել է ծախսի կայուն վիճակ, իսկ Գառնիի (N2045, N2046) դիտակետերում նկատվել են աննշան փոփոխություններ՝ ծախսի ավելացման միտումով:


Արարատյան արտեզյան ավազանի հարավ-արևելյան մասում գտնվող Լուսառատի (N2074), Եղեգնավանի (N2065), Արարատի (N2076) դիտակետերում նկատվել են առավել կայուն ջրերի մակարդակներ՝ բարձրացման միտումով:

Արարատյան արտեզյան ավազանի չճտրվանող հորատանցքերի (Արտաշատի N2069) դիտակետում նկատվել է ստորերկրյա ջրի մակարդակի իջեցում՝ 0.52 մետր: Համանման իջեցումներ են դիտարկում Արտաշատի N2062 և Դալարի N2063 չճտրվանող հորատանցքերում՝ 0.05-0.65լ/վ-ով: Արտաշատի N2064 դիտակետում, որտեղ դիտվել են առավելագույն մակարդակի իջեցումները, դիտարկումները կատարվել են պոմպի աշխատանքի ժամանակ:


Արարատյան ՋԿՏ-ի 10 դիտակետում մայիս և հունիս ամիսներին կատարվել է ջրի որակի մոնիթորինգ. Սուրենավանի N2067 չճտրվանող հորատանցքում և Արտաշատի N2069 չճտրվանող հորատանցքում կոշտության, հանքայնացման բարձր պարունակությունները կրում են բնական բնույթ:




Գծապատկեր 89. Արարատյան ՋԿՏ-ի բնադրությունների ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 90. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 91. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 92/93. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերում մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում մակարդակների փոփոխությունները







Գծապատկեր 94. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման պարունակությունը



Գծապատկեր 95. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատների պարունակությունը

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր
 - 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս

Հարավային օրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	3.75	5.70	66	4.89	7.70	63	7.85	8.47	3
Ողջի	Կապան	14.4	11.1	130	38.9	21.6	180	32.5	18.7	173
Որոտան	Գորայք	7.44	4.60	162	20.3	12.3	166	5.41	8.55	63

Մակերևութային ջրերի որակ

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):


Որոտան գետի ջրի որակը վերին հոսանքում հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գորայք գյուղից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Միսիան քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Միսիան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Միսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 96. Կարճևան գետում պղինձի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 97. Վարարակ գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը:

Գորայքի N529, Գորիսի N1399 դիտակետերում նկատվել են ծախսի ավելացումներ՝ 0.3-1.54լ/վ-ով: Գորիս N899, Անգեղակոթ N1175 և N1323 դիտակետերում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր, աննշան բարձրացման միտումով: Շաքիի N532 և Սպանդարյանի N537 աղբյուրներում նկատվել է ծախսի աննշան իջեցումներ:

Հարավային ՋԿՏ-ի 4 դիտակետում մայիս ամսին կատարվել է որակի մոնիթորինգ: Հանքայնացման և կոշտության արժեքները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Բնադրյուններ
Ծախս, լ/վ

Հարավային ՋԿՏ



Բնադրյուններ
Ծախս, լ/վ


Հարավային ՋԿՏ




Գծապատկեր 98. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում մակարդակների փոփոխությունները

Հանքայնացում, գ/լ

Հարավային ՋԿՏ




Գծապատկեր 99. Արարատյան ՋԿՏ-ի ղիտակետերում հանքայնացման պարունակությունը



Գծապատկեր 100. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատների պարունակությունը

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ագատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:


2022 թվականի 2-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են 17-րդ աղյուսակում:

Աղյուսակ 17. Ջրամբարների ջրալցվածությունը 2022 թվականի 2-րդ եռամսյակում


Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը, մլն. խոր.մ	Փաստացի լցվածությունը, ապրիլի 30-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, մայիսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, հունիսի 30-ի դրությամբ	
		ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	332	63	417	79	371	71
Արփի լիճ	105	45.3	43	63.7	61	65.6	62
Ագատ	70	45.6	65	61.0	87	53.1	76
Ապարան	91	38.8	43	49.1	54	45.7	50
Մարմարիկ	24	13.6	57	20.1	84	14.4	60

Ջրամբարների ջրի որակ

Արփի լճի ջրամբարի ջրի որակը հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ախուրյանի ջրամբարի ջրի որակը հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ապարանի ջրամբարի ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս): Ագատի ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Կեչուտի ջրամբարի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 101. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 102. Երևանյան լճում ֆուխատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 18. Ջրամբարների ջրի որակը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ (112)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ամոնիում իոն	4-րդ	
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Մայիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ (112)	ամբարտակի մոտ	Լուծված թթվածին	3-րդ	5-րդ
		ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	4-րդ	
		Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
Ազատի ջրամբար (113)	ամբարտակի մոտ	ԿԶՆ	4-րդ	4-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ



Հունիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփի լճի ջրամբար (109)	ամբարտակի մոտ	ԿՉՆ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար (110)	ամբարտակի մոտ	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Արաքս գետ

2022 թվականի 2-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 8 դիտակետում: Գետի ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ձկնատնտեսական ՍԹԿ-ներով գնահատման համաձայն, դիտվում է պղնձով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԲՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, ցինկի, քրոմի, արսենի, նիկելի, մոլիբդենի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների բերված է աղյուսակ 19-ում:

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՋՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



ՊԱՅԱՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
- ▶ որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▶ հիդրոլոգիական դիտակետ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ



Աղյուսակ 19. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)															
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՍԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Արսեն, ՍԹԿ=0,05 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)																
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.2	1.5	2.1	1.9	–	1.3	–	6.2	7.7	–	–	8.0	22.9	2.1	7.2	6.0
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	–	2.2	2.1	1.9	1.7	2.2	–	17.6	15.5	1.3	1.8	11.4	46.4	3.7	10.8	14.5
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	1.5	1.7	1.5	1.5	–	–	–	27.3	5.8	–	–	7.0	17.2	3.7	10.8	5.3
Շվանհձորի գյուղից ներքև (AMS-6)	1.2	1.3	1.9	1.8	1.5	2.1	2.4	143.4	22.3	1.8	2.5	34.2	74.5	16.7	48.2	23.0

Մայիս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)													
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Մագնեզիում, ՄԹԿ=40 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	–	1.9	3.6	–	–	–	27.5	9.6	4.8	27.9	14.9	4.2	56.9	1.3
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	–	–	6.1	–	–	–	18.1	8.9	5.0	30.2	13.9	4.3	59.8	1.0
0.5 կմ ք. Արարատից ներքև (28)	1.3	–	3.8	–	–	1.5	23.9	10.2	6.1	38.6	16.7	5.2	73.6	1.4
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.3	1.7	1.9	1.8	1.1	–	5.5	3.9	–	5.8	15.5	1.1	8.8	26.4
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.2	1.8	1.9	2.0	1.1	–	44.1	6.0	–	6.8	16.3	2.5	18.7	27.0
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	1.3	1.9	1.6	2.0	1.1	–	10.6	3.9	–	5.4	14.9	1.2	9.7	26.4
Շվանհձորի գյուղից ներքև (AMS-6)	1.3	2.0	1.3	1.9	1.1	–	42.2	3.6	–	8.2	14.8	2.1	16.6	27.1

Հունիս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)											
	Թթվածնի քիմիական պահանջարկ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	–	–	1.4	–	6.7	4.8	1.6	15.0	11.5	2.5	36.4	–
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.2	–	5.3	1.6	6.2	6.6	–	15.3	13.0	1.7	25.1	2.6
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.3	2.5	7.9	1.7	6.7	6.5	–	12.8	13.5	1.5	20.4	3.2
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	–	2.1	6.0	1.8	7.7	6.0	–	11.2	13.0	1.3	18.0	2.9
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	1.8	–	5.2	1.8	48.8	5.9	–	22.0	16.2	4.5	31.1	3.1

5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:



2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Տավուշի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Լոռու մարզերում:

Տավուշի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 14.7-35.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.9-8.4 անգամ, քրոմի պարունակությունը՝ 7.3-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 8.0-10.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 4.0-19.5 անգամ:

Կոտայքի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:



Արարատի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.2 անգամ, պղնձի պարունակությունը՝ 11.0-14.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.9-4.3 անգամ, քրոմի պարունակությունը՝ 8.0-11.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 13.8-17.5 անգամ և արսենի պարունակությունը՝ 3.5-6.5 անգամ:

Վայոց ձորի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.5-2.9 անգամ, պղնձի պարունակությունը՝ 25.0-74.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 3.5-6.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-15.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 4.8-13.8 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.1-1.4 անգամ և արսենի պարունակությունը՝ 3.5-6.5 անգամ:



Գծապատկեր 103. Հողերում մետաղների պարունակությունը

Լոռու մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.3-7.1 անգամ, պղնձի պարունակությունը՝ 16.4-1760.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.6-55.9 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 2.9-19.3 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.1-27.6 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-37.9 անգամ:



Գծապատկեր 104. Լոռու մարզի հողերում մետաղների պարունակությունը

6. ԱՆՏԱՌՆԵՐ

Անտառայահպանություն

Պահպանության վիճակի մասնակի դիտարկում-ուսումնասիրություններ են իրականացվել «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ներում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն», «Վանաձորի անտառտնտեսություն», «Ճամբարակի անտառտնտեսություն» և «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղերում ինչի ընթացքում դաշտային աշխատանքներն իրականացնող խմբի կողմից վեր են հանվել նկատված խնդիրները, տրվել են համապատասխան առաջարկություններ:

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ

«Արտանիշի» մասնաճյուղի «Դրախտիկի» տեղամասի 4-րդ քառակուսու 52-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում կա նոր կառուցված անտառմիջան ճանապարհ, կային հողակույտեր, հատված ծառերի ճյուղեր և տարածքը բավականին աղտոտված էր: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության տվյալ հատվածում 2020թ. հուլիսի 21-ին իրենց աշխատակիցների կողմից իրականացված հերթական ստուգայցի ժամանակ հայտնաբերել են ռելիեֆի խախտման դեպք, և պարզվել է, որ քաղաքացի Մայիս Ավետիսյանը իր կողմից վարձակալած տարածքում կատարում է հողի հարթեցման աշխատանքներ, որի համար տեղում կազմվել է արձանագրություն և աշխատանքները դադարեցվել են: Բացի վերոնշյալը, ըստ տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում իրականացվել է մինչև 1901.5 մետր նիշը ընկած հատվածի 0.48հա-ի վրա մաքրման աշխատանքներ, որը իրականացվել է մասնավոր կապալառուի կողմից, որի համար կազմվել է համապատասխան պայմանագիր: Սակայն պայմանագրում նշված քառակուսին /2/ չի համապատասխանում դաշտում իրականացված ուսումնասիրությունների տվյալներին, ինչը ազգային պարկի աշխատակիցները մեկնաբանում էին տեղորոշիչ սարքերի բացակայությամբ:

«Արտանիշի» մասնաճյուղի «Դրախտիկի» տեղամասի 4-րդ քառակուսու 2-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային կապույտ գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության՝ այդ տարածքում 2021թ. ընթացքում N-000200 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ, ըստ որի հատման են նշանակվել թվով 391 հատ սոճենի և թեղի տեսակի ծառեր:

«Արտանիշի» մասնաճյուղի «Արտանիշի» տեղամասի 31-րդ քառակուսու 1-ին հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են 7 հատ թեղի և մեկ սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց վրա առկա էին կապույտ գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության տվյալ ծառերի համար կազմվել է անտառխախտման ձեռագիր արձանագրություն: Ըստ ազգային պարկի աշխատակիցների քանի որ չունեն համապատասխան հաստատված ձևաչափ արձանագրությունները կազմվում են ձեռագիր ձևով և գրանցվում են մատյանում:

«Վարդենիսի» մասնաճյուղի «Փամբակի» տեղամասի 5-րդ քառակուսու 4-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային սև գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված

տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000197 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 311 հատ սոճենի տեսակի ծառեր: Պետք է փաստել, որ հատված ծառերի կոճղերի և տարածքում առկա փայտանյութի արտաքին տեսքից ծառերը առողջ էին և չէին համապատասխանում «Խնամքի և սանրտարական հատման կարգի» կանոններին, և տվյալ տարածքը գտնվում էր 1910 ծմբ-ի վրա: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության հատատեղի հատկացման համար հիմք է հանդիսացել ազգային պարկի աշխատակիցների և համապատասխան մասնագիտական հանձնաժողովի կողմից կազմված արձանգրությունները, ըստ որի տվյալ ծառերը գտնվում են փլվածքների եզրին և դա է հանդիսացել որպես հիմք:

«Վարդենիսի» մասնաճյուղի «Ծովակի» տեղամասի 5-րդ քառակուսու 8,10-րդ հատվածներում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային կապույտ գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2020թ.-ի ընթացքում շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ:

«Վարդենիսի» մասնաճյուղի «Փամբակի» տեղամասի 16-րդ քառակուսու 6-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առկա են թեղի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց վրա առկա էին սև գույնի ներկով արված համարակալումներ, որոնք դժվար ընթեռնելի էր, իսկ մի մասի վրա առկա չէին որևէ համարակալման և ներկի հետքեր: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության տվյալ ծառերի համար կազմվել է անտառիսախտման ձեռագիր արձանագրություն: Ըստ ազգային պարկի աշխատակիցների քանի որ չունեն համապատասխան հաստատված ձևաչափ արձանգրությունները կազմվում են ձեռագիր ձևով և գրանցվում են մատյանում:

«Վարդենիսի» մասնաճյուղի «Ծովակի» տեղամասի 16-րդ քառակուսու 1-ին հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են հրդեհի հետքեր և բարդի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային սև գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում մի քանի տարի առաջ տեղի է ունեցել հրդեհ և 2021թ.-ի ընթացքում N-000199 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 182 հատ բարդի տեսակի ծառեր, սակայն տոմսում նշված քառակուսիները /10,11/ չէին համապատասխանում դաշտում իրականացված ուսումնասիրությունների տվյալներին, ինչը ազգային պարկի աշխատակիցները մեկնաբանում էին տեղորոշիչ սարքերի բացակայությամբ: Տարածքում առկա էին նաև բարդի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց վրա կար կարմիր գույնի ներկանյութով արված համարակալումներ, որոնց համար ըստ ազգային պարկի աշխատակիցների կողմից տրամադրված տեղեկատվության կազմվել է անտառիսախտման ձեռագիր արձանգրություն:

«Վարդենիսի» մասնաճյուղի «Վարդենիս» տեղամասի 40-րդ քառակուսու 2-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում կատարվել էր ավազհանման աշխատանքներ:

«Մարտունու» մասնաճյուղի «Վարդենիկ» տեղամասի 2-րդ քառակուսու 7-րդ հատվածում, 3-րդ քառակուսու 2-րդ և 4-րդ հատվածներում, ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ տվյալ հատվածում 2021թ.-ին հրդեհ է բռնկվել, որի պատճառով մասամբ այրվել է չիչխանի ծառաթփեր, հրդեհված տարածքում կային նաև չիչխանի հատված կոճղեր, որոնց վրա բացակայում էր համարակալում:

«Մարտունու» մասնաճյուղի «Վարդենիկ» տեղամասի 2-րդ քառակուսու 52-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են բարդի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային սևի ներկով արված համարակալումներ, որոնք դժվար ընթեռնելի էին: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000211 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 371 հատ բարդի տեսակի ծառեր:

«Նորատուսի» մասնաճյուղի «Նորատուսի» տեղամասի 18-րդ քառակուսու 1-ին հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային կարմիր գույնի ներկով արված համարակալումներ, որոնց մի մասը դժվար ընթեռնելի էր: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000204 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 1298 հատ սոճենի տեսակի ծառեր:

«Նորատուսի» մասնաճյուղի «Նորատուսի» տեղամասի 14-րդ քառակուսու 9-րդ հատվածում և 14-րդ քառակուսու 1,3 հատվածներում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային կարմիր գույնի ներկով արված համարակալումներ, որոնց մի մասը դժվար ընթեռնելի էր: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000205 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 1117 հատ սոճենի տեսակի ծառեր:

«Նորատուսի» մասնաճյուղի «Այրիվանի» տեղամասի 27-րդ քառակուսու 14-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային կարմիր գույնի ներկով արված համարակալումներ, որոնց մի մասը դժվար ընթեռնելի էր: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000207 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 748 հատ սոճենի տեսակի ծառեր:

«Նորատուսի» մասնաճյուղի «Այրիվանի» տեղամասի 28-րդ քառակուսու 12-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առկա են սոճենի տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց վրա առկա էին կարմիր գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության արագ արձագանքման բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել են հատված ծառերի կոճղերը և խախտում կատարող անձին, որի համար կազմվել է զեկուցագիր և ձեռագիր արձանագրություն: Ըստ ազգային պարկի աշխատակիցների քանի որ չունեն համապատասխան հաստատված ձևաչափ արձանագրություններ կազմվում են ձեռագիր ձևով և գրանցվում են մատյանում:

«Նորատուսի» մասնաճյուղի «Նորատուս» տեղամասի 32-րդ քառակուսու 13-րդ հատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում կային սոճի ծառատեսակի հատված ծառեր, որոնց կոճղերի վրա առկա էին կապույտ ներկանյութով արված համարակալումներ: Ըստ ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության տվյալ հատվածում հաստատված և շահագործված է 2020թ. համար սանիտարական հատատեղ:

«Սևանի մասնաճյուղի «Ախթամար» տեղամասի 20-րդ քառակուսու 30-րդ հատվածում, ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում առկա են սոճենի

տեսակի հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ կային սև գույնի ներկով արված համարակալումներ և ըստ ազգային պարկի կոդից տրամադրված տեղեկատվության այդ տարածքում 2021թ.-ի ընթացքում N-000202 տոմսով շահագործվել է սանիտարական հատման նպատակով հատատեղ ըստ որի հատման են նշանակվել թվով 658 հատ սոճենի տեսակի ծառեր, սակայն տոմսում նշված քառակուսիները /10,15,17,18,19,21,22/ չէին համապատասխանում դաշտում իրականացված ուսումնասիրությունների տվյալներին, ինչը ազգային պարկի աշխատակիցները մեկնաբանում էին տեղորոշիչ սարքերի բացակայությամբ:

«Սևանի մասնաճյուղի «Ախթամար» տեղամասի 1-րդ քառակուսու 103-րդ հատվածում, արդյունքում պարզվել է, որ տվյալ հատվածում կային բարդի ծառատեսակի էտված ծառեր, որոնց վրա առկա էին կապույտ ներկանյութով արված համարակալումներ: Լուսանկարներ թղթապանակ N-17:

«Սևանի մասնաճյուղի «Ախթամար» տեղամասի 3-րդ քառակուսու 55-րդ հատվածում, արդյունքում պարզվեց որ տվյալ հատվածում կային բարդի ծառատեսակի էտված ծառեր, որոնց վրա առկա էին կապույտ ներկանյութով արված համարակալումներ:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ

Շամախյան տեղամասում պահպանության ուսումնասիրություններ են իրականացվել 5-րդ և 10-րդ պահաբաժիններում:

5-րդ պահաբաժնում (կոորդ.40045I01, 44047I15) թափուկ փայտանյութի մթերում է իրականացվել:

Նույն պահաբաժնի 40045I01.92, 44047I10.09 կոորդինատում հայտնաբերվել է կոտրված 2 հաճարենիներ, փայտանյութը տեղում էր և 40045I04.04, 44046I55.47 կոորդինատում առկա էին քամատապալ ծառեր և նախկին հատումներ:

40044I54.96, 44046I39.83 կոորդինատում առկա էին արմատախիլ եղած հաճարենիներ, որոնց փայտանյութը տեղում էր:

40045I11.53, 44046I08.99 կոորդինատում նախկինում հատված տարածքներ էին:

10-րդ պահաբաժնում դիտարկվել է այրված տարածք, որտեղ առկա էին նախկինում իրականացված հատումներից մնացած կոճղեր:

Դիլիջան տեղամասում պահպանության ուսումնասիրություններ են իրականացվել 1-ին 8-րդ, 9-րդ և 10-րդ պահաբաժիններում:

8-րդ պահաբաժնում ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ ապօրինի հատումներ (գերեզմանի մոտակայքում) Հատվել էին 10—ից 48սմ տրամագիծ ունեցող հացենի, բոխի, սոճենի կեռասենի տեսակի ծառեր որոնց վրա բացակայում էր համարակալումը և կնիքի հետքերը: Տարածքում առկա էին նաև արձանագրված ապօրինի հատումներ, որոնք ազգային պարկի և համայնքի սահմանային վիճելի տարածքում են:

Նույն պահաբաժնի 28-րդ քառակուսու 7-րդ անտառամասում իրականացվել էր հողի շերտի դուրս բերում:

28-րդ քառակուսու 4-րդ հատվածում հայտնաբերվել են ապօրինի հատված հաճարենու և սոճու կոճղեր 8-րդ 38սմ տրամագծերով, որոնց վրա բացակայում էր համարակալումը և կնիքի հետքերը: Հատված սոճիների տարածքը հրդեհված էր:

9-րդ պահաբաժնում ապօրինի հատումներ չեն հայտնաբերվել:

1-ին պահաբաժնի 4-րդ քառակուսու 3-րդ անտառամասում սաղարթի փոփոխությունը պայմանավորված էր կոտրված հաճարենու և թխկու ծառերով:

Հաղարծին տեղամաս

Քառակուսի 12, անտառամաս անտառամաս 4, 17

Շուրջ 11 հա մակերես ունեցող 4-րդ անտառամասում հիմնականում երեք առանձին օջախներով առկա էին տարբեր տեսակի ու տրամագծերի հատված ծառերի կոճղեր: Թարմ հատումները տարածվում էին անտառամասով անցնող ճանապարհին գուգահեռ՝ ընգրկելով նաև անտառամասին հարակից 17 անտառամասը: Տվյալ տեղանքում առկա էին բոխու, հաճարենու, հացենու, կեռասենու հատված ծառերի կոճղեր, ջախ և ճյուղիկներ: 4-րդ անտառամասում բարձր թեքության լանջին ևս առկա էին հատումներ համեմատաբար ավելի հին ժամանակահատվածի, կոճղերի մի մասը՝ արմատախիլ եղած: Կոճղերին կնիքի ու համարակալումների հետքեր չկային, ուսումնասիրությունն արվել է ազգային պարկի աշխատակիցների հետ համատեղ:

Քառակուսի 12 անտառամաս 10

Անտառամասում առկա էին հաճարենու(28սմ, 24սմ, 16սմ, 30սմ) և թեղի տեսակի՝ 30սմ տրամագծերով հատված ծառերի կոճղեր: Հատումների արդյունքում առաջացած փայտանյութի մի մասը ուսումնասիրության պահին տեղում էր: Համարակալում կամ կնիքի հետքեր բացակայում էին:

Քառակուսի 13 անտառամաս 10

Տեղանքում առկա էր հաճարենի տեսակի ծառերի ճյուղերի , առանձին մասերի հատումներ, փայտանյութի մի մասը տեղում էր : Անտառամասում ավելի խորք՝ դեպի ձորակ ձգվող հատվածում, արբանյակային պատկերների վերձանման արդյունքում առանձնացված փոփոխությունը պայմանավորված էր հողային շերտի խախտումով՝ ամենայն հավանականությամբ սողանք կամ փլվածք: Փլվածքի շրջակայքում առկա էին հատված և արմատախիլ եղած ծառերի կոճղեր, որոնց մի մասի վրա երևում էին կարմիր ներկանյութի հետքեր:

Քառակուսի 12 Անտառամաս 2

Տեղանքում առկա էին մի քանի արմատախիլ եղած և հատված ծառերի կոճղեր՝ կանաչ ներկանյութով համարակալված, փայտանյութի մի մասը տեղում էր:

«Հայաստան» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Ուսումնասիրություններ են իրկանացվել 40°31'44"N 44°44'19"E, 40°31'42"N 44°44'03"E , 40°32'23"N 44°42'59"E, 40°32'03"N 44°42'45"E, 40°31'59"N 44°42'34"E և 40°31'56"N 44°42'55"E կորդինատների տարածքներում պարզվել է, որ տվյալ տեղամասում տեղի էր ունենում շինարարական և հողային աշխատանքներ:Ըստ անտառտնտեսության աշխատակիցների բացատրության տվյալ տարածքը չի պատկանում Հրազդանի անտառտնտեսությանը:

Մեղրաձորի ա/պ 40°37'17"N 44°33'08"E կորդինատի տարածքում պարզվեց, որ տվյալ տեղամասում տեղի է ունեցել անտառամիջյան ճանապարհի մաքրման աշխատանքներ:

Մեղրաձորի ա/պ 40°34'53"N 44°33'27"E կորդինատի տարածքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային քամատապալ ձյունակոտոր կաղնի և կեչի տեսակի ծառեր, որոնց փայտանյութը գտնվում էր տեղում:

«Հայաստան» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Լալվարի անտառպետություն քառակուսի 2, անտառամաս 88 , 87

Անտառամասերում առկա էին արմատախիլ եղած և ջարդված տասնյակ ծառեր, հիմնականում բոխի տեսակի: Տեղանքի բարդ ռելիեֆային պայմանները փայտամթերման աշխատանքները կարող են դարձնել շատ դժվար: Անտառամասերում վերջին ժաանակներում գետնատարած հրդեհ է տեղի ունեցել, ինչի մասին վկայում էին ծառերի բնային հատվածների այրվածքները:

Քառակուսի 12, անտառամաս 4, 2, Քառակուսի 11 անտառամաս 1

Միմյանց հարակից անտառամասերում առկա էին արմատախիլ եղած և ջարդված ավելի քան տասնյակ ծառեր, հիմնականում բոխի տեսակի: Փայտանյութը տեղում էր, համարակալումներ և կնիքի հետքեր առկա չէին: Տեղանքի բարդ ռելիեֆային պայմանները փայտամթերման աշխատանքները կարող են դարձնել շատ դժվար:

Մեծավանի անտառապետություն

Քառակուսի 14, հատամաս 5, հատամաս 7

Անտառամասերում առկա էին հացենի ծառատեսակի հատված ծառերի կոճղեր, որոնք արձանագրված և համարակալված էին նարնջագույն կնիքով:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղ


Անտառապահպանության ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսացել Սենտինել2 արբանյակից ստացված 5.06.2022 և 20.06.2021 ժամանակահատվածների պատկերների վերծանման արդյունքները: Գրասենյակային փուլում նախնականորեն առանձնացված է եղել ընդհանուր թվով 79 սաղարթի փոփոխված տարածք:

Վանաձորի անտառապետություն

Քառակուսի 30, անտառամաս 50

Անտառամասում առկա էին 14-60սմ տրամագծերով տարբեր տեսակի ապօրինի հատված ծառերի կոճղեր և ճյուղեր: Կոճղերին համարակալումներ և կնիքի հետքեր բացակայում էին, տեղանքի որոշ հատվածներում առկա էին հատված ծառերից մնացած ճյուղիկների կուտակումներ, փայտանյութի մեծ մասը տեղում չէր:

Քառակուսի 32, անտառամաս 17



Անտառամասում բարձր թեքության լանջին, անտառածածկի եզրով առկա էին ջարդված հիմնականում մատղաշ ծառեր: Ըստ անտառտնտեսության աշխատակիցների մեկնաբանությունների, ծառերի ջարդը պայմանավորված է եղել զարնանային առատ ձյան տեղումների ներգործությամբ:

Խնձորուտի անտառապետություն

Քառակուսի 5, անտառամաս 17, քառակուսի 6, անտառամաս 24

Անտառամասերում՝ Տանձուտի ոսկի-բազմամետաղ հանքարդյունաբերական լքված թափոնների տեղամասի հարևանությամբ առկա էին 20-30սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր: Համարակալումներ ու կնիքի հետքեր կոճղերին առկա չէին, փայտանյութը բացակայում էր:

Քառակուսի 10, անտառամաս 4

Անտառամասում առկա էին հիմնականում բոխի տեսակի 8-42սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ առանց համարակալումների և կնիքի հետքերի: Առկա

Էին նաև հաճաքենու և կեռասենու հատված ծառերի կոճղեր ու ճյուղեր: Փայտանյութի մեծ մասը բացակայում էր, տեղանքում առանձին հատավածներում նկատվում էին հատումներից մնացած ճյուղիկների կուտակումներ:

Քառակուսի 10, անտառամաս 3

Անտառամասում առկա էին հաճաքենի տեսակի 30-40սմ, թեղի տեսակի 30-34սմ, բոխի 30-42սմ, ուռենի 42սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ առանց համարակալումների և կնիքի հետքերի: Փայտանյութը բացակայում էր, տեղանքում առանձին հատավածներում նկատվում էին հատումներից մնացած ճյուղիկների կուտակումներ:

Քառակուսի 10, անտառամաս 7

Անտառամասում առկա էին հաճաքենի տեսակի 22-38սմ, թխկի տեսակի 12-18սմ, թեղի տեսակի բոխի 18-22սմ, ուռենի 38սմ, բոխի 42-60սմ, կեռասենի 22-30սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր և ծառերի առանձին մասեր՝ առանց համարակալումների և կնիքի հետքերի: Փայտանյութը բացակայում էր, տեղանքում առանձին հատավածներում նկատվում էին հատումներից մնացած ճյուղիկների կուտակումներ:

Խնձորուտի անտառապետության 10-րդ քառակուսու վերոնշյալ անտառամասերում ուսումնասիրված հատումներից արված դաշտային լուսանկարները թղթապանականերում տեղաբաշխվել են ըստ իրենց աշխարհագրական տեղադիրքի: Քանզի անտառամասերը իրար անմիջապես հարակից են, հնարավոր է լուսանկարներից որոշները՝ պայմանավորված սարքավորման տարածական շեղումով, լինեն փոքր ինչ շեղված և ներկայացված լինեն քառակուսու մյուս անտառամասի նկարագրական թղթապանակում:

Քառակուսի 9, անտառամաս 16


Անտառամասում առկա էին հիմնականում բոխի տեսակի 30-40սմ, թեղի տեսակի 10-40սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ առանց համարակալումների և կնիքի հետքերի: Փայտանյութը բացակայում էր, տեղանքում առանձին հատավածներում նկատվում էին հատումներից մնացած ճյուղիկների կուտակումներ:

Քառակուսի 6, անտառամաս 4

Անտառամասում առկա էին հիմնականում բոխի տեսակի 18-44սմ տրամագծերի ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ առանց համարակալումների և կնիքի հետքերի: Փայտանյութը բացակայում էր, տեղանքում առանձին հատավածներում նկատվում էին հատումներից մնացած ճյուղիկների կուտակումներ:

Մայիտակի անտառապետություն

Քառակուսի 27, անտառամաս 22



Անտառամասում վերոնշյալ բարձր թեքության լանջից մինչև անտառամասով անցնող գետակի կիրճ առկա էր սոճենու արմատախիլ եղած, գլորված և կուտակված գերաններ և

ճյուղեր: Ըստ անտառտնտեսության աշխատակիցների մեկնաբանման երևույթը պայմանավորված է 2022 թվականի գարնան առատ ձյան տեղումների ներգործությամբ, որի արդյունքում ծառերի հսկայական քանակ ձյունկոտոր է դարձել, այնհուսն ձնահոսքի ուղիով ծառուտն ամբողջությամբ բնական ճանապարհով տեղափոխվել և կուտակվել և ձորակում:

Մարգահովիտի անտառպետություն

Քառակուսի 26, անտառամաս 22, անտառամաս 23 ,անտառամաս 7

Դաշտային դիտարկումների արդյունքում պարզվեց, որ անտառաասերում 2021 թվականին շահագործվել է սանիտարական հատատեղ: Հատատեղում գարնանային սեզոնին առատ տեղումների պատճառով արմատախիլ են եղել բոխի տեսակի ծառեր, որոնց փայտանյութը տեղում էր, համարակալումներ առկա չէին:

Քառակուսի 12, անտառամաս 29, անտառամաս 31 , անտառամաս 32,Քառակուսի 15 անտառամաս 13

Անտառամասերում, հիմնականում հարավ արևմուտքից դեպի հյուսիս արևելք ձգվող բարձր թեքության լանջերին առկա էին արմատախիլ եղած հիմնականում բոխի տեսակի մեծաքանակ ծառեր: Փայտանյութը տեղում էր:

Քառակուսի 11, անտառամաս 9

Անտառամասում առկա էին արմատախիլ եղած, ջարդված ծառեր, որոնց փայտանյութի մի մասը ըստ անտառտնտեսության աշխատակիցների մեկնաբանությունների դուրս է բերվել թափուկի տրամադրման նպատակով:

Քառակուսի 29, անտառամաս 9

Անտառամասում առկա էին արմատախիլ եղած, ջարդված ծառեր, որոնց փայտանյութի մի մասը ըստ անտառտնտեսության աշխատակիցների մեկնաբանությունների դուրս է բերվել թափուկի տրամադրման նպատակով:

Անտառխախտման արձանագրությունների ուսումնասիրություններ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ

Շամախյան տեղամասի 8-րդ պահաբաժնում ուսումնասիրվել է 2021 թվականին կազմված N018 համարի անտառխախտման արձանագրությունում նշված ապօրինի հատումները: Հատվել էին կաղնիներ, որոնցից N44,45,46,47,48,49,50 համարի կոճղերը տեղում չափագրվել են և համեմատվել անտառխախտման արձանագրությունում նշված տվյալների հետ: Էական շեղումներ չեն նկատվել: Տարածքում առկա է եղել N 4 և 10 համարի կաղնու կոճղեր, որոնք տվյալ արձանագրությունում առկա չէին: Համարակալումները արված էին կանաչ գույնի ներկով:

Դիլիջան տեղամասի 10-րդ պահաբաժնում 30-րդ քառակուսում ուսումնասիրվել է 2021թ-ին կազմված N082 անտառխախտման արձանագրության վայրը: Հատվել էին 6 սոճենիներ: Տեղում չափագրվել են կոճղերը և համեմատվել արձանագրությունում նշված տեսակների և տրամագծերի հետ, որոնք համընկնում էին: Ազգային պարկի կողմից տվյալ վայրում վերջին տարիներին անընդհատ կազմվում են անտառխախտման արձանագրություններ, ինչը չի կարգավորում վիճակը և տարածքը համարվում է խոցելի:

Դիլիջան տեղամասի 10-րդ պահաբաժնի 30-րդ քառակուսում ուսումնասիրվել է 2021թ.-ին կազմված N092 անտառխախտման արձանագրության համաձայն հայտնաբերված ապօրինի հատումները: Անհայտ անձի կողմից իրականացվել է թվով 8 հատ սոճենի և բոխի տեսակի տարբեր տրամագծերի ծառերի հատում: Մեր կողմից տվյալ տեղամասում իրականացվեց հատված ծառերի կոճկղերի չափումներ և արդյունքները համեմատվեցին

անտառխախտման արձանագրության տվյալների հետ, որոնք համապատասխանում էին, կոճղերի վրա առկա էին սև գույնով արված համարակալումներ և կնիքի հետքեր:

Նույն վայրում ապօրինի հատումներ էին իրականացվել նաև 2022թ.-ին, որի համար կազմվել էր N024 անտառխախտման արձանագրությունը: Հատվել էր 5 ծառ կաղնի, բոխի, թեղի տեսակի: Երկու կաղնիների փայտանյութը տեղում էր: Համարակալումները արված էին նույնպես սև գույնով: Տեսակային կազմը և տրամագծերը համընկնում էին արձանագրությունում նշված տվյալներին: Այս տարածքը նույնպես համարվում է խոցելի, քանի որ գրեթե ամեն տարի տեղի են ապօրինի հատումներ:

Դիլիջան տեղամասի 10-րդ պահաբաժնում ուսումնասիրվել է 2021թ.-ի N078 անտառխախտման արձանագրության համաձայն հայտնաբերված ապօրինի հատումները, ըստ որի հատումն իրականացվել էր անհայտ անձի կողմից: Մեր կողմից տվյալ տեղամասում իրականացվեց հատված ծառերի կոճղի չափում արդյունքը համապատասխանում էր անտառխախտման արձանագրության տվյալի հետ: Տարածքում առկա էր 1 հատ չկնքված բոխի տեսակի ծառի կոչը 18սմ տրամագծով:

Դիլիջան տեղամասի 8-րդ պահաբաժնում ուսումնասիրվել է 2021թ.-ին կազմված N075 անտառխախտման արձանագրության համաձայն հայտնաբերված ապօրինի հատումը, համաձայն որի 27-րդ քառակուսում Դիլիջան քաղաքի բնակչի կողմից իրականացվել է թվով 7 հատ ծառի ապօրինի հատում: Մեր կողմից տվյալ տեղամասում իրականացվեց հատված ծառի կոճղի չափում արդյունքը համապատասխանում էր անտառխախտման արձանագրության տվյալի հետ, կոճղի վրա առկա էր սև գույնով արված համարակալում և կնիքի հետքեր:

Ուսումնասիրվել է N090 անտառխախտման արձանագրությունով հայտնաբերված ապօրինի հատված ծառերի տեղամասերը: Համաձայն կազմված արձանագրության անտառտնտեսության աշխատակիցների կողմից Հաղարծին տեղամասի 12-րդ պահաբաժնի 16-րդ քառակուսու 21-րդ հատվածում հայտնաբերվել է ընդհանուր թվով 11 հատ ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ կաղնի-5, բոխի-3, թխկի-2 և դաժի-1 հատ տեսակի: Մեր կողմից ընտրանքային կարգով իրականացվել են հատված ծառերի չափումներ, արդյունքում ստացված տվյալները համապատասխանում էին անտառխախտման արձանագրությունում նշված տեսակների և տրամագծերի տվյալներին: Հատված ծառերի կոճղերի վրա առկա էր սև գույնի ներկով արված համարակալումներ: Տեղանքում կային նաև ծառերի կոճղեր որոնց վրա տեսանելի չէր համարակալման հետքեր (28-30 սմ տրամագծերով): (նկարներ թղթապանակ 7):

Ուսումնասիրվել է N054 անտառխախտման արձանագրությունով հայտնաբերված ապօրինի հատված ծառերի տեղամասերը: Համաձայն կազմված արձանագրության անտառտնտեսության աշխատակիցների կողմից Աղավնավանի տեղամասի 2-րդ պահաբաժնի 5,6-րդ քառակուսում հայտնաբերվել է ընդհանուր թվով 45 հատ ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ հաճաբենի-43, բոխի-1 և կաղնի-1 հատ: Մեր կողմից ընտրանքային կարգով իրականացվել են հատված ծառերի չափումներ, արդյունքում ստացված տվյալները համապատասխանում էին անտառխախտման արձանագրությունում նշված տեսակների և տրամագծերի տվյալներին: Հատված ծառերի կոճղերի վրա առկա էր կանաչ գույնի ներկով արված համարակալումներ: Տեղանքում կային 2 հատ հատված հաճաբենի ծառատեսակի կոճղեր (88 և 94 սմ տրամագծերով), որոնց վրա բացակայում էին կնիք և համարակալում:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Համբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղ

2021թ.-ի ընթացքում Ճամբարակի անտառտնտեսության կողմից անտառխախտման արձանագրություններից մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 3-ը:

Ճամբարակի անտառպետությունում ուսումնասիրվել է N-003624 անտառխախտման արձանագրությունը, որտեղ շեղում չի հայտանքերվել:

Գետիկի անտառպետությունում ուսումնասիրվել է N-003440, N-003614, N-003615 անտառխախտման արձանագրությունը, որից շեղում չի հայտանքերվել:

Դպրաբակի անտառպետությունում ուսումնասիրվել է N-003616, N-003622, N-003623, N-003625, N-003626 անտառխախտման արձանագրությունը, որից շեղում չի հայտանքերվել:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

2021թ.-ի ընթացքում անտառտնտեսության կողմից կազմվել է թվով 44 հատ անտառխախտման արձանագրություն, ընդհանուր 5083 հատ ծառ: Մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 5 –ը:

Ծաղկաձորի անտառպետությունում ուսումնասիրվել է՝ N-003011 , N-003702, N-003345 և N-003697 անտառխախտման արձանագրությունները:

N-003011, N-003702, N-003345 և N-003697 անտառխախտման արձանագրությունների կազմած վայրը, որը գտնվում է Ծաղկաձորի անտառպետության 3-րդ պահաբաժնի, 15-րդ քառակուսու 2,7,8,12,13 և 14-րդ անտառամասերում, նշված տարածքում կային բազմաթիվ հատված ծառեր որոնց կոճղերի վրա կար համարակալումներ և նարնջագույն պիտակներ: Ընտրանքային կարգով իրականացվեց պիտակավորված ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, արդյունքում շեղում չկար: Վերը նշված տարածքում կային նմանատիպ և նույն ժամանակահատվածի հատված մի քանի կաղնի և բոխի տեսակի ծառեր, որոնց վրա բացակայում էր՝ համարակալումը, մուրճի կնիքը և պիտակավորումը:

Մեղրաձորի անտառպետությունում ուսումնասիրվել է՝ N-003683 անտառխախտման արձանագրությունը:


N-003683 անտառխախտման արձանագրության կազմած վայրը, որը գտնվում է Մեղրաձորի անտառպետության 4-րդ պահաբաժնի, 51-րդ քառակուսու 13-րդ անտառամասերում, նշված տարածքում կային 15 հատ Կաղնի տեսակի 20-50 սմ տրամագծի հատված, կիսատ սղոցված ծառեր որոնց վրա կար համարակալումներ և նարնջագույն պիտակներ: Արձանագրված ծառերի փայտանյութը տեղում էր: Ընտրանքային կարգով իրականացվեց ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, արդյունքում շեղում չկար:

N-003683 անտառխախտման արձանագրության կազմված վայրի տարածքում կային նմանատիպ հատված և կիսատ սղոցված մի քանի կաղնի տեսակի ծառեր որոնց վրա բացակայում էր համարակալումը, մուրճի կնիքը և պիտակավորումը:

Անտառվերականգնում

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ

Դիլիջան տեղամասի 8-րդ քառակուսուում ուսումնասիրվել է «Մայ ֆորեսթ Արմենիա» կազմակերպության կողմից իրականացված անտառվերականգման աշխատանքները, որտեղ իրականացվել էր 20հա տարածքի ցանկապատում և այդ տարածքում իրականացվել է 8հա ցանք և 2հա հարթակների կառուցում: Ընտրված տարածքը մասնակի անտառապատ էր և կար բավարար քանակով մատղաշ: Ցանված սերմերը դեռևս չէին ծլել, ընտրանքային եղանակով ուսումնասիրվել է 10 ցանված փոսիկներ: Փոսիկներում առկա է եղել մեկ կամ երկու կաղնու կամ մեկ կաղնու և մեկ հաճարենու սերմեր: Փոսերի մի մասում սերմերը ուռչած էին, մի մասում նեխած: Արդյունավետության վերջնական գնահատական կարելի է



Մեծավանի անտառպետություն 12-րդ քառակուսու անտառամաս 66-ում ուսումնասիրվել է 01.11.2021 թվականին տնկման եղանակով իրականացված անտառապատման աշխատանքները: Դաշտային հանույթի և քարտեզագրման արդյունքում պարզվեց, որ աշխատանքների իրականացման ընդհանուր մակեսները կազմում է մոտ 16 հա (GPS սարքավորման տարածական շեղումը կազմել է առավելագույնը 5 մետր): Չափագրման համադրման արդյունքում պարզվեց, որ տեղանքն ըստ նախկին անտառկառավարման պլանի թվային քարտեզի ընդգրկում է 12-րդ քառակուսու 1, 6, 7, 12, 13, 15, 17, 19, 22, 26, 27, 56, 57, 58, 59, 62 անտառամասերն, ինչպես նաև հարակից անտառտնտեսության սահմանին հարող մոտ 1 հա տարածք:

Գլխավոր ծառատեսակ է հանդիսացել սոճենին: Ընտրանքային փորձահրապարակների

տեղադրումից և դիտարկումներից պարզվեց, որ անտառապատման տարածքի հարավային հատվածում կաչոդունակությունը կազմում է մոտ 80%, հատկապես արդյունավետ է կեչիների մոտ: Այլ պատկեր էր տեղանքի հյուսիսային հատվածում, այստեղ սոճիների մեծ մասն ունեին մուգ նարնջագույն գունավորում, որոշներն արդեն իսկ չորացած էին, ընդհանուր միտումը գնում էր դեպի չորացման: Այս հատվածում կեչի և հացենի տեսակներն ինչպես հարավային հատվածում նման խնդիր չունեին: Ըստ տնտեսության աշխատակիցների մեկնաբանման, սոճիների կաչոդունակության նման տարաբնույթ դրսևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղանքում օգտագործվել է տարբեր տարածաշրջաններից բերված տնկիներ:

Տեղանքն ամբողջությամբ պատշաճ ցանկապատված էր՝ փայտե սյուներով և անցկացված մի քանի շերտանի փշալարով: Ցանկապատը գտնվում էր թարմ և ամուր փիճակում: Ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 6550 մետր:

Ուսումնասիրվել է 07.11.2019 Մեծավանի 5-րդ քառակուսու 1 անտառամասում տնկման եղանակով իրականացված անտառապատման աշխատանքները: Մեկ հեկտարի հաշվով տնկվել էր 3000 հատ տնկի, հիմնականում կեչի տեսակի: 01.12.2021 20.12.2021 ժամանակահատվածում իրականացվել էր լրացման աշխատանքներ: Կեչիների կաչոդունակությունը բավականին բարձր էր, ըստ փորձահրապարակների և դիտարկումների տվյալների մոտ 70-80%, առանձին հատվածներում գերազանցում էր 90%-ը: Այլ պատկեր էր սոճիների դեպքում, որոնք հիմնականում չորացել էին, լրացման արդյունքում փոխարինվել կեչիներով ու հացենիներով: Հացենու մոտ վեգետացիոն ակտիվությունը նոր էր սկսվում, նկատվում էին բողբոջների ուռչում, ինչը վկայում էր տնկիների մեծ մասի կաչոդունակության լավ փիճակը: Լանջի հյուսիսային հատվածում կեչիների արդեն իսկ մոտ 60 սմ բարձրությամբ ծառաշարք էր ձևավորվել: Ցանկապատի հետ առկա էր խնդիր: Առանձին հատվածներում մոտ 10 մետր երկարությամբ սյուներն ընկած էին, որոշ մասի մոտ փտման պրոցես էր սկսվել: Անհրաժեշտ է վերանայել նմանատիպ հատվածներում փայտե սյուներ օգտագործելու էֆեկտիվությունը, անհրաժեշտության դեպքում դիտարկել համարժեք այլ լուծումներ՝ բետոնե կամ մետաղյա

հենասյուներ և այլն: Խնամքի և լրացման աշխատանքներ անհրաժեշտ է իրականացնել պարբերաբար, տարածքը հավակնում է ապահովել լավ վերջնարդյունք:

Ուսումնասիրվել է 17.11.2020 Մեծավանի 17-րդ քառակուսու 9, 11, 14, 15 անտառամասերում տնկման եղանակով իրականացված անտառապատման աշխատանքները: Մեկ հեկտարի հաշվով տնկվել էր 3000 հատ տնկի, որպես գլխավոր ծառատեսակ է հանդիսացել սոճենին: 01.12.2021-20.12.2021 ժամանակահավածում իրականացվել է լրացման աշխատանքներ: Կաչողունակության տեսանկյունից գրեթե նույն պատկերն էր ինչ 5-րդ քառակուսու 1 անտառամասում ներկայացված պատկերը: Որոշ հատվածներում սոճիներն ամբողջությամբ չորացած տեսք ունեին, որոշ հատվածում գտնվում էին լավ կանաչ վիճակում: Որոշ շարքերում սոճիները կիսով չափ ունին մուգ նարնջագույն գունավորում, սակայն միտումն ավելի շատ դեպի կանաչում էր գնում: Կեչիների կաչողունակությունը բավականին բարձր էր, հացենիների մասով դեռ վաղ էր գնահատական տալը պայմանավորված տեսակի վեգետացիոն պասիվ շրջանից: Ընդհանուր առմամբ ըստ ընտրանքային փորձահրապարակների տվյալների տեղանքում կաչողունակությունը գնատվում էր 60-70 %: Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել խնամքի և լրացման աշխատանքներ, ինչպես նաև հետևել ցանկապատի պահպանությանը: Որոշ հատվածներում սյուներն ընկած էին:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է 2019թ, 2020թ. և 2021թ- ի պետ. բյուջեով նախատեսված Հրազդանի անտառտնտեսությունում իրականացված անտառապատման աշխատանքները:

Փազկաձորի ա/պ-ն քառակուսի 29-ի հատված 3-ում 2019թ-ի համար նախատեսված է եղել 10 հա տարածքի վրա: Տնկման աշխատանքները իրականացվել են խրամատային եղանակով, համաձայն խառնման և տեղաբաշխման սխեմայի և Հայանտառ ՊՈԱԿԻ 09.12.2019թ ն01-21/33 գրության գլխավոր ծառատեսակ է ընտրվել կաղնին, իսկ ուղեկցողներ խնձորենի, հացենի և թեղի: Միջշարային հեռավորությունը կազմում է 3մ, իսկ միջբույսային հեռավորությունը 1մ: Ընդհանուր թվով 1 հա-ի համար նախատեսվել է 1500 հատ կաղնի, 1000 հատ հացենի, 200 հատ խնձորենի և 300 հատ թեղի մանրատերև:

Մեր կողմից իրականացվել է դաշտային դիտարկում-ուսումնասիրություններ, տեղադրվել են 400քմ մակերեսով փորձահրապարակներ՝ կաչողականությունը որոշելու համար: Իրականացված դիտարկումներից պարզվեց, որ ընդհանուր առմամբ պահպանված էր միջշարային և միջբույսային հեռավորությունները, կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա միջինը կազմում է մոտ 22-25%, ինչը անբավարար ցուցանիշ է:

Մեղրաձորի ա/պ-ն քառակուսի 39-ում 2020թ-ի համար նախատեսված էր 10 հա տարածք, որից իրականացվել էր 3հա-ը, սակայն 2020 թվականի անտառների մոնիթորինգի իրականացման արդյունքում պարզվել էր, որ տնկումը իրականացվել էր 1.2հա տարածքում: Ինչից հետո անտառտնտեսության կողմից իրականացվել էր պակաս տնկվածի լրացում: Տնկման աշխատանքները իրականացվել են խրամատային եղանակով, համաձայն խառնման և տեղաբաշխման սխեմայի գլխավոր ծառատեսակ է ընտրվել սոճի սովորական, իսկ ուղեկցողներ խնձորենի, հացենի սովորական, թխկի բ.լ. և կեչի: Միջշարային հեռավորությունը կազմում է 3մ, իսկ միջբույսային հեռավորությունը 1մ: Ընդհանուր թվով 1 հա-ի համար նախատեսվել է 1500 հատ սոճի սովորական, 375 հատ հացենի սովորական, 375 հատ թխկի բ.լ. և 750 հատ կեչի:

Մեր կողմից իրականացվել է դաշտային դիտարկում-ուսումնասիրություններ, տեղադրվել են 400քմ մակերեսով փորձահրապարակներ՝ կաչողականությունը որոշելու

համար: Իրականացված դիտարումներից պարզվեց, որ ընդհանուր առմամբ պահպանված էր միջշարային և միջբույսային հեռավորությունները, կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա միջինը կազմում է մոտ 37-40%, ինչը անբավարար է:

Մեղրաձորի ա/պ-ն քառակուսի 34-ի 17,19 և 23-րդ հատվածներում 2021թ-ի աշնան համար նախատեսված էր 5 հա տարածք: Տնկման աշխատանքները իրականացվել են խրամատային եղանակով, համաձայն խառնման և տեղաբաշխման սխեմայի գլխավոր ծառատեսակ է ընտրվել սոճի սովորական, իսկ ուղեկցողներ կեչի, թխկի: Միջշարային հեռավորությունը կազմում է 3մ, իսկ միջբույսային հեռավորությունը 1մ: Ընդհանուր թվով 1 հա-ի համար նախատեսվել է 1500 հատ սոճի սովորական, 750 թխկի և 750 հատ կեչի:

Մեր կողմից իրականացվել է դաշտային դիտարկում-ուսումնասիրություններ, տեղադրվել են 400քմ մակերեսով փորձահրապարակներ՝ կաչողականությունը որոշելու համար: Իրականացված դիտարումներից պարզվեց, որ ընդհանուր առմամբ պահպանված էր միջշարային և միջբույսային հեռավորությունները, կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա միջինը կազմում է մոտ 70-75%:

Արզականի ա/պ-նում 2021թ-ի գարնան համար նախատեսված է եղել 6 հա տարածք: Տնկման աշխատանքները իրականացվել են խրամատային եղանակով, համաձայն խառնման և տեղաբաշխման սխեմայի գլխավոր ծառատեսակ է ընտրվել սոճի սովորական, իսկ ուղեկցողներ խնձորենի, հացենի սովորական: Միջշարային հեռավորությունը կազմում է 3մ, իսկ միջբույսային հեռավորությունը 80սմ-1մ: Ընդհանուր թվով 1 հա-ի համար նախատեսվել է 1500 հատ սոճի սովորական, 1200 հատ հացենի սովորական, 300 հատ խնձորենի:

Նախատեսված 6 հա ից կատարվել է 4,6 հա:

Մեր կողմից իրականացվել է դաշտային դիտարկում-ուսումնասիրություններ, տեղադրվել են 400քմ մակերեսով փորձահրապարակներ՝ կաչողականությունը որոշելու համար: Իրականացված դիտարումներից պարզվեց, որ ընդհանուր առմամբ պահպանված էր միջշարային և միջբույսային հեռավորությունները, կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա միջինը կազմում է մոտ 50-53%, ինչը անբավարար ցուցանիշ է:

Հայաստան» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղ


Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է 2019-ից 2021 թվականներին պետական բյուջեով և համապետական շաբաթօրյակով նախատեսված անտառպատման աշխատանքները:

Ուսումնասիրվել են 2019 թվականին Վանաձորի և Սպիտակի անտառպետություններում համապատասխանաբար 7հա և 5հա անտառպատում իրականացված տարածքները, որտեղ 2021 թվականին կատարվել էր գույքագրում և լրացում սոճի ծառատեսակի տնկիներով:




Անտառպատված տարածքներում պետք է իրականացնել խոտքաղի աշխատանքներ: Խնձորուտի անտառպետության 19-րդ քառակուսում Լիտվայի հանրապետության աջակցությամբ կատարվել էր կեչի ծառատեսակի անտառպատման աշխատանքներ: Նախատեսված 3,5 հա տարածքի վրա տնկման աշխատանքները իրականացված էր խրամատային և փոսային տարբերակով:

Մեր կողմից իրականացվել էր դիտարկում ուսումնասիրություններ, տեղադրվել 400 մ² մակերեսով փորձահրապարակներ կաչողականությունը որոշելու համար: Դիտարկումներից պարզվեց որ անտառպատման մակերեսը կազմում էր 3,5 հա, միջշարային հեռավորությունը կազմում էր 3 մետր, միջբուսայինը 1 մետր: Կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա կազմում էր 80-85 %:



Սպիտակի անտառպետության 30-րդ քառակուսու 8-րդ անտառամաս


Ուսումնասիրվել է պետական բյուջեով տեղանքում 2021 թվականի աշնանը 5 հա ընդհանուր մակերես ունեցող անտառնշակույթերի հիմնադրման աշխատանքները: Trimble TDC100 դաշտային տեղորշման սարքավորման միջոցով հանութագրվել է անտառապատման աշխատանքների սահմանները և քարտեզագրման արդյունքում պարզվել (տարածական շեղումը կազմել է առավելագույնը 5մ),որ ընդհանուր մակերես սահմանագատված մի մասը ցանկապատով, փոսերով և սյուներով կազմում է 6 հա:



Տնկման աշխատանքները իրականացված էր խրամատային տարբերակով: Գլխավոր ծառատեսակ էր ընտրված սոճինի, ուղեկցողներ՝ թեղի, հացենի, խնձորենի:

Մեր կողմից իրականացվել էր դիտարկում ուսումնասիրություններ, տեղադրվել 400 մ² մակերեսով փորձահրապարակներ կաչողականությունը որոշելու համար: Դիտարկումներից պարզվեց որ անտառպատման մակերեսը կազմում էր 6 հա, միջշարային հեռավորությունը կազմում էր 3 մետր, միջբուսայինը 1 մետր: Կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա կազմում էր 80 %:

Սպիտակի անտառապետության 19-րդ քառակուսում համապետական շաբաթօրյակով



նախատեսված 10 հա տարածք: Տնկման աշխատանքները իրականացվել էր խրամատային և փոսային տարբերակներով: Գլխավոր ծառատեսակ ընտրված էր սոճին և կաղնին, ուղեկցողներ՝ հացենի, տանձենի, խնձորենի:

Տարածքը դեռևս ցանկապատված չէր, իրականացված էր սյուների տեղադրման համար նախատեսված փոսային աշխատանքները:

Մեր կողմից իրականացվել էր դիտարկում ուսումնասիրություններ, տեղադրվել 400 մ2 մակերեսով փորձահրապարակներ կաչողականությունը որոշելու համար: Դիտարկումներից պարզվեց, որ անտառապատման մակերեսը կազմում էր 10 հա, միջշարային հեռավորությունը տարբեր հատվածներում տատանվում էր 3-ից 5 մետրի սահմաններում: Կաչողականությունը ընդհանուր տարածքի վրա կազմում էր մոտ 60 %:

Հատատեղերի հատկացում և շահագործում

Հայանտար» ՊՈԱԿ-ի «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաձյուղ

Մասնաձյուղը 2022 թվականի համար նախնական հատկացրել է թվով 8 հատատեղ՝ ընդհանուր 2762 խմ ծավալով, որից 90.8 խմ շինափայտ: Հատման են նշանակված կոտրված, չորացած, քամատապալ, ձյունակոտոր, արժեքավոր՝ հաճար, կաղնի, թխկի, սոճի, լորենի, բալենի, թեղի անմիջական հարևանությամբ գտնվող ծառերի բնականոն աճին խանգարող ծառեր:

Շնողի անտառապետություն

Շնողի անտառապետության 6-րդ պահաբաժին 20-րդ քառակուսու 6.8.9 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 111 ծառ՝ 504.15 խմ ծավալով, ուսումնասիրության արդյունքում ավելացվել է 1 հաճար տեսակի ծառ և ընդհանուր ծավալը կազմել է 504.55 խմ: Ընտրանքային կարգով չափազրվել են 21 ծառեր, որի արդյունքում շեղումը կազմել է 2.6 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառամիջյան ճանապարհի 1 կմ վերանորոգում և 0.5 կմ կառուցում:

Շնողի անտառապետության 6-րդ պահաբաժին 18-րդ քառակուսու 58.55.54.46.49 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 157 ծառ՝ 396.57 խմ ծավալով, ուսումնասիրության արդյունքում ավելացվել է 12 ծառ և ընդհանուր ծավալը կազմել է 404.78 խմ: Հատատեղում հատկացված 89 համարի կաղնի ծառատեսակը հանձանաժողովի կողմից փոխարինվել է հաճարով: Ընտրանքային կարգով չափազրվել են 56 ծառեր, որի արդյունքում շեղումը կազմել է 3.7 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառամիջյան ճանապարհի 1 կմ վերանորոգում և 0.2 կմ կառուցում:

Շնողի անտառապետության 4-րդ պահաբաժին 1-րդ քառակուսու 9.10 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 361 հատ սոճի՝ 56.8 խմ ծավալով: Ընտրանքային կարգով չափազրվել են 50 ծառեր, որի

արդյունքում շեղումը կազմել է 4.6 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառմիջյան ճանապարհի 1կմ վերանորոգում և 0.3կմ կառուցում: 220-255 համարի ծառերը հաշվառվել են անտառմիջյան ճանապարհի կառուցման համար:

Ծաղկաշատի անտառպետություն

Ծաղկաշատի անտառպետության 4-րդ պահաբաժին 14-րդ քառակուսու 42.30.29.24 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 117 ծառ՝ 235.59խմ ծավալով, ուսումնասիրության արդյունքում ավելացվել է 10 ծառ և ընդհանուր ծավալը կազմել է 257.36խմ: Ընտանքային կարգով չափազրվել են 24 ծառեր, որի արդյունքում շեղումը կազմել է 1.8 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառմիջյան ճանապարհի 0.4կմ վերանորոգում և 1.6կմ կառուցում:

Սանահինի անտառպետություն

Սանահինի անտառպետության 3-րդ պահաբաժին 18-րդ քառակուսու 33.31.17.18 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 193 ծառ՝ 566.46խմ ծավալով: Ընտանքային կարգով չափազրվել են 27 ծառեր, որի արդյունքում շեղումը կազմել է 0.9 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառմիջյան ճանապարհի 2կմ վերանորոգում և 0.7կմ կառուցում:

Սանահինի անտառպետության 2-րդ պահաբաժին 23-րդ քառակուսու 17.11 անտառամասերում հատկացված սանիտարական հատման հատատեղում նախնական հատման է նշանակված եղել 160 ծառ՝ 336.3խմ ծավալով, ուսումնասիրության արդյունքում ավելացվել է 3 ծառ և ընդհանուր ծավալը կազմել է 340.21խմ: Հատատեղում հատկացված 18 և 44 համարի կաղնի ծառատեսակները հանձնաժողովի կողմից փոխարինվել է հաճար և բոխի տեսակներով: Ընտանքային կարգով չափազրվել են 22 ծառեր, որի արդյունքում շեղումը կազմել է 1.3 %, ինչը թույլատրելի սահմանում է: Հատատեղերի շահագործման համար անհրաժեշտ է անտառմիջյան ճանապարհի 1կմ վերանորոգում:

Լորուտի անտառպետություն

Լորուտի անտառպետության 1 և 2-րդ պահաբաժիններում հատկացված 2 սանիտարական (քամատապալ) հատատեղերը հանձնաժողովի կողմից տրվել են վերակնքման, քանի որ հատատեղերում առկա էին մեծ քանակի չհաշվառված քամատապալ, ձյունակոտոր, ցցաչոր ծառեր: Հանձնարարվել է կատարել նոր հաշվեգնահատում և նյութերը ներկայացնել «Հայանտառ» ՊՈԱԿ հետագա ընթացք տալու համար:

Ուսումնասիրությունների արդյունքներով դրական եզրակացություն են ստացել 6 հատատեղերը:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Ուսումնասիրվել է Տաշիրի անտառպետության 7-րդ քառակուսու անտառամաս 11, 12, 14, 15–ում 2022թ-ին նախատեսված նոսրացման հատատեղն ըստ հատատեղի հաշվեգնահատման ցուցակի, ընդհանուր 3300 հատ սոճի ծառատեսակի համար, ընդհանուր 529,5 խմ ծավալով, որից շինափայտ՝ 160 խմ, տեխնիկական փայտ՝ 50 խմ, վառելափայտ՝ 319,5 խմ:

Դաշտային ուսումնասիրություններից պարզվեց, որ նախատեսված հատատեղի կնքված և համարակալված ծառերը գտնվում են Տաշիրի անտառպետության քառակուսի 7-ի անտառամաս 11,12,14,15-ում: Համարակալումներն իրականացվել էր կարմիր գույնի ներկանյութով: Մեր կողմից ընտրանքային կարգով փորձարկվեց իրականացվել ընթեռնելի համարակալումներով ծառերի տրամագծերի չափումներ և համեմատություն հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, սակայն ոչ մի համարակալում ընթեռնելի չէր: Հատման համար ընտրված և համարակալված ծառերը համապատասխանում էին հատման տեսակով սահմանված կարգերին:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Հրազդանի ա/տ մասնաճյուղի կողմից 2022թ.-ի համար նախատեսվող հատատեղերը գտնվում էին կնքման փուլում: Մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է Մեղրաձորի անտառպետության 51-րդ քառակուսու 4-րդ հատվածում 2022թ.-ի համար նախատեսված սանիտարական հատման տեսակի հատատեղը: Նշված տարածքում կատարվում էր ծառերի կնքման (համարակալման) աշխատանքներ: Դաշտային ուսումնասիրություններից պարզվեց, որ նախատեսված հատատեղի կնքված և համարակալված ծառերի համարակալումները իրականացվել էր կարմիր գույնի ներկով և մասամբ դժվար ընթեռնելի էր: Հատման նշանակված ծառերը համապատասխանում էին սանիտարական հատման տեսակին: Ընտրանքային կարգով իրականացվեց ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց նախնական հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, արդյունքում շեղումը կազմում էր 2%, ինչը թույլատրելի սահմաններում է:

Հրազդանի ա/տ մասնաճյուղի կողմից 2021թ հատկացված հատատեղերից մեր կողմից ուսումնասիրվել է երեքը:

Ուսումնասիրվել է ըստ հատատեղի հաշվեգնահատման ցուցակում նշված տվյալների Ծաղկաձորի ա/պ 4-րդ քառակուսու 21, 24, 26-րդ հատվածների, N01889 անտառհատման տոմսով այլ հատման համար նախատեսված հատատեղը, որտեղ հատման են նշանակվել թվով 578 հատ (կաղնի 549, ուռենի 16, թխկի 7, արոսենի 3, բոխի 2 և տանձենի 1) տեսակի ծառեր ընդհանուր 278,17խմ ծավալով: N01889 անտառհատման տոմսով հատատեղը հատկացվել է «Բարձրավոլտ էլեկտրական ցանացեր» փակ բաժնետիրական ընկերության և Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի՝ Պայմանագիր NԲԷՑ-ՄԱԱՇՁԲ-21/20, որը կնքվել է 09.12.2021թ-ին: Ըստ Հրազդանի ա/տ մասնաճյուղի աշխատակիցների, N01889 անտառհատման տոմսի հաշվեգնահատման ցուցակը կազմվել է 2021թ.-ի դեկտեմբեր ամսին, սակայն եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով չեն կարողացել իրականացնել հատումները: Այդ իսկ պատճառով N01889 անտառհատման տոմսը դուրս է գրվել 03.05.2022թ-ին:

Դաշտային ուսումնասիրություններից պարզվեց, որ նախատեսված հատատեղի կնքված և համարակալված ծառերի համարակալումները իրականացվել էր կապույտ գույնի ներկով և մասամբ դժվար ընթեռնելի էր: Ընտրանքային կարգով իրականացվեց ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, հատված ծառերի փայտանյութի մի մասը գտնվում էր տեղում: Արդյունքում շեղումը կազմում էր 6%, ինչը թույլատրելի սահմաններում է:

Ուսումնասիրվել է ըստ հատատեղի հաշվեգնահատման ցուցակում նշված տվյալների Արգականի ա/պ 8-րդ քառակուսու բոլոր հատվածում, N01705 անտառհատման տոմսով սանիտարական հատման համար նախատեսված հատատեղը, որտեղ հատման են

նշանակվել թվով 330 (սոճի 65, բարդի 253, ակացիա 10, տանձենի 2) տեսակի ծառեր ընդհանուր 117,79խմ ծավալով:

Դաշտային ուսումնասիրություններից պարզվեց, որ նախատեսված հատատեղի կնքված և համարակալված ծառերի համարակալումները իրականացվել էր կապույտ գույնի ներկով և մասամբ դժվար ընթեռնելի էր: Ընտրանքային կարգով իրականացվեց ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, արդյունքում շեղումը կազմում էր 8%, ինչը թույլատրելի սահմաններում է:

Ուսումնասիրվել է ըստ հատատեղի հաշվեգնահատման ցուցակում նշված տվյալների Մեղրաձորի ա/պ 38-րդ քառակուսու 2-րդ հատվածում, N01887 անտառահատման տոմսով սանիտարական հատման համար նախատեսված հատատեղը, որտեղ հատման են նշանակվել թվով 46 (սոճի 46) տեսակի ծառեր ընդհանուր 11,27 խմ ծավալով որից 1,5խմ շինափայտ:

Դաշտային ուսումնասիրություններից պարզվեց, որ նախատեսված հատատեղի կնքված և համարակալված ծառերի համարակալումները իրականացվել էր կապույտ գույնի ներկով և մասամբ դժվար ընթեռնելի էր: Ընտրանքային կարգով իրականացվեց ծառերի տրամագծերի չափումներ և համեմատվեց հաշվեգնահատման ցուցակում առկա ցուցանիշների հետ, արդյունքում շեղումը կազմում էր 7%, ինչը թույլատրելի սահմաններում է:

Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Ուսումնասիրվել է Մարգահովիտի անտառպետության 15-րդ քառակուսու 20-րդ անտառամասում 2022 թվականի համար նախատեսված, բայց դեռևս չհաստատված սանիտարական հատման հատատեղ, որտեղ կատարվել էր ծառերի ընտրության և համարակալման աշխատանքներ:

Դիտարկված տարածքում ընտրված ծառերը համապատասխանում էին սանիտարական հատմանը: Ծառերի համարակալումը կատարված էր կարմիր գույնի ներկանյութով, որոնք դժվար ընթեռնելի էին:

Ուսումնասիրվել է Վանաձորի անտառպետության 7-րդ քառակուսու 4-րդ անտառամասում 2022 թվականի համար նախատեսված այլ հատման հատատեղ, որտեղ կատարվել էր ծառերի ընտրության և համարակալման աշխատանքներ՝ կարմիր գույնի ներկանյութով: Հատման նպատակը անտառամասով անցնող էլկտրահաղորդման լարերով պայմանավորված հրդեհային անվտանգության, դժբախտ պատահարների և վթարային անջատումներով է մեկնաբանվում: Դաշտային դիտարկումներից պարզվեց , ծառերը համարակալված են էլեկտրահաղորդման գծերի երկայնքով երկողմանի, սակայն անտառմասը ըստ մեր դաշտային տեղորոշման սարքավորման գտնվում է 7-րդ քառակուսու 2-րդ անտառամասում:


Անտառային վնասատուներ եվ հիվանդություններ

Համաձայն ազգային պարկի կողմից տրամադրված տեղեկատվության «Սևանի» մասնաճյուղի «Ախթամար» տեղամասի 2,3,15,20 քառակուսիներում, «Նորատուսի» մասնաճյուղի «Այրիվան» տեղամասի 2-րդ պահաբաժնի 24-րդ քառակուսում հայտնաբերվել են հիվանդություններով և վնասատուներով վարակված սոճիներ: Մեր կողմից տվյալ

«Մևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Մարտունու» մասնաճյուղի «Վարդենիկ» տեաղամասի մաքրման աշխատանքների դիտարկում-ուսումնասիրություններ

ԱՏՀ միջավայրում օրթոֆոտոհատակագծի և եռաչափ մոդելի ստացման և վերլուծության արդյունքում պարզվել է որ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Մարտունու» մասնաճյուղի «Վարդենիկ» տեղամասի ավամերձ հատվածում 2022 թ. մաքրվել է 11.2հա տարածք (որից 0.2հա-ում առկա է արմատախիլ եղած եղեգնաթփային զանգված), որից 10.5 հա-ը 1901.5մ նիշից ցածր, իսկ 0.7հա-ը 1901.5մ նիշից բարձր:





Եռաչափ մոդելի վերլուծության արդյունքում իրականացվել է սղոցված և կուտակված փայտանյութի ծավալի հաշվարկ, որի արդյունքում ստացվել է փայտանյութի մոտավոր ծավալ (1966.42 խմ՝ ներառյալ ջախ-ճյուղիկներ): Փայտանյութի ծավալի ստացված արդյունքները մոտավոր են պայմանավորված այն հանգամանքով, որ սղոցված փայտանյութի մի մասը կուտակված էր կանգուն ծառերի բնային հատվածում՝ սաղարթը խանգարում էր մոդելում կուտակված փայտանյութի սահմանագատման համար:

Հավելված 1. Գետերի ջրերի որակը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ 2022

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1)	Վանադիում, երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին	4-րդ	
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Վանադիում, երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին, ԿԶՆ	4-րդ	
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Վանադիում, երկաթ	3-րդ	5-րդ
			Ալյումին	4-րդ	
			ԿԶՆ	5-րդ	
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Ամոնիում իոն, երկաթ	3-րդ	5-րդ
			Ալյումին	4-րդ	
			ԿԶՆ	5-րդ	
	Դեբեդ	0.5 կմ Մարց գետի թափման կետից ներքև (5)	Վանադիում, երկաթ	3-րդ	4-րդ
			Մանգան, ալյումին, ԿԶՆ	4-րդ	
		Սահմանի մոտ (7)	ԹՔՊ, մանգան, երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին, ԿԶՆ	4-րդ	
	Չորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	ԹՔՊ, պղինձ	3-րդ	5-րդ
			Ցինկ, կադմիում, վանադիում, կոբալտ, ալյումին	4-րդ	
			Մանգան, երկաթ	5-րդ	
		Գետաբերան (10)	ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ	3-րդ	5-րդ
			Ալյումին	4-րդ	
			ԿԶՆ	5-րդ	
	Մարց գետ	Գետաբերան (13)	Ալյումին	3-րդ	3-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Երկաթ, սուլֆատ իոն, ՀԼԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Կոբալտ, բերիլիում, ալյումին	4-րդ	
			Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, անագ	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Գարգառ	Ակունք (210)	Այլումին	3-րդ	3-րդ
		Գետաբերան (342)	Երկաթ, ԿԶՆ	3-րդ	4-րդ
			Այլումին	4-րդ	
	Շնող	Գետաբերան (343)	Երկաթ, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, մանգան, բերիլիում, ալյումին	4-րդ	
			Պղինձ, մոլիբդեն, ԿԶՆ	5-րդ	
Ախուրյան	Ախուրյան	1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	ԹՔՊ, ամոնիում իոն, արսեն, մանգան	3-րդ	5-րդ
			Երկաթ, ԿԶՆ	4-րդ	
			Ֆոսֆատ իոն	5-րդ	
		0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Արսեն, մանգան, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			Ֆոսֆատ իոն	5-րդ	
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, արսեն, մոլիբդեն, մանգան, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			Ֆոսֆատ իոն	5-րդ	
	Կարկաչուն	Գետաբերան (38)	ԹՔՊ, վանադիում, կալցիում, նատրիում, ԼԱԱ, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մոլիբդեն, մանգան, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն, ԿԶՆ	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, կոբալտ, ալյումին	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			ԿԶՆ	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Ախուրյան	Մեծամոր	11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մանգան, կոբալտ, ալյումին	4-րդ	
			Երկաթ, ԿԶՆ	5-րդ	
		0.5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	Ամոնիում իոն, արսեն, մանգան, ԿԶՆ	3-րդ	4-րդ
			Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ	4-րդ	
Հրազդան	Քասախ	Գետաբերան (47)	Ամոնիում իոն, ալյումին, ԿԶՆ	3-րդ	4-րդ
			Երկաթ	4-րդ	
	Հրազդան	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	Ամոնիում իոն, ալյումին, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Մանգան, կոբալտ, երկաթ	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	Մանգան, կոբալտ, ալյումին	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից վերև (54)	Վանադիում	5-րդ	5-րդ
		9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ (55)	ԹԿՊ, ԹՔՊ, նիտրիտ իոն, մանգան, նատրիում, ալյումին	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, կոբալտ, երկաթ, ԿԶՆ	4-րդ	
			Վանադիում	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Հրազդան	Գետաբերան (56)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, կոբալտ, երկաթ, նատրիում, ալյումին, ԸԱԱ, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԿԶՆ	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		գլ. Գեղանիստի մոտ (225)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, կոբալտ, երկաթ, ալյումին	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
	Մարմարիկ	Գետաբերան (58)	Ցինկ, պղինձ, վանադիում, բարիում, ալյումին, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ԿԶՆ	3-րդ	5-րդ
			Երկաթ	4-րդ	
			Մանգան, կոբալտ	5-րդ	
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Բարիում, ալյումին	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Վանադիում, երկաթ, բարիում, ալյումին	4-րդ	
			Մանգան, կոբալտ, ԿԶՆ	5-րդ	
Սևան	Ձկնագետ	Գետաբերան (61)	Կոբալտ, երկաթ, ԿԶՆ	3-րդ	4-րդ
			Ալյումին	4-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սևան	Մասրիկ	Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն, նիկել, կոբալտ, սուլֆատ իոն,	3-րդ	5-րդ
			Մանգան, վանադիում, երկաթ, ալյումին, ԿՉՆ	4-րդ	
			Ծարիր	5-րդ	
	Սոթք	Գետաբերան (65)	Նիտրատ իոն, նիկել, մանգան, վանադիում, քարիում, սուլֆատ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Երկաթ, ալյումին, ԿՉՆ	4-րդ	
			Ծարիր	5-րդ	
	Կարճաղբյուր	Գետաբերան (67)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Վարդենիս	Գետաբերան (70)	Ալյումին, սուլֆատ իոն	3-րդ	3-րդ
	Մարտունի	Գետաբերան (72)	Ֆոսֆատ իոն, քարիում, կալիում, ալյումին, սուլֆատ իոն, ԸԼԱ	3-րդ	3-րդ
	Արգիճի	Գետաբերան (74)	ԹՔՊ, մանգան, ալյումին	3-րդ	3-րդ
	Ծակքար	Գետաբերան (75)	ԹԿՊ, վանադիում	3-րդ	3-րդ
	Շողվազ	Գետաբերան (76)	Մոլիբդեն, վանադիում, նատրիում, ընդհանուր ֆոսֆոր, ԸԼԱ	3-րդ	4-րդ
			Ֆոսֆատ իոն	4-րդ	
	Գավառագետ	Գետաբերան (78)	Ամոնիում իոն, մոլիբդեն, ԸԱԱ, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Նատրիում, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ֆոսֆատ իոն, վանադիում	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սևան	Արփա-Սևան ջրատար	0.7 կմ գյ. Ծովինարից հարավ-արևելք (68)	Մանգան, երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին	4-րդ	
Արարատյան	Վեդի	6 կմ ք. Արարատից ներքև (82)	Կոբալտ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, մանգան, ալյումին	4-րդ	
			Երկաթ, ԿԶՆ	5-րդ	
	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Ամոնիում իոն, երկաթ, ալյումին, ԿԶՆ	3-րդ	3-րդ
	Դարբ	Ակունք (348)	Երկաթ, բարիում, ծարիր, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Ալյումին	4-րդ	
			Մանգան, կոբալտ	5-րդ	
		Գետաբերան (349)	Ամոնիում իոն, կոբալտ, երկաթ	3-րդ	4-րդ
			Մանգան, ալյումին, ծարիր	4-րդ	
		Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Երկաթ, ալյումին	3-րդ
	Որոտան-Արփա ջրատար	թունելի ելքից (353)	Մոլիբդեն, բարիում	3-րդ	4-րդ
			Երկաթ, սուլֆատ իոն	4-րդ	
Հարավային	Կարճևան	Գետաբերան (344)	Պղինձ, արսեն, մանգան, երկաթ, ծարիր	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն, կոբալտ, բոր, ալյումին, ՀԼԱ	4-րդ	
			ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, վանադիում, կալիում, նատրիում, ՀԱԱ, սուլֆատ իոն, ԿԶՆ	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հարավային	Մեղրիգետ	0.5 կմ ք. Մեղրիից վերև (89)	Ամոնիում իոն, վանադիում	3-րդ	5-րդ
			Կոբալտ, երկաթ, ալյումին, ԿՉՆ	4-րդ	
			Մանգան	5-րդ	
		Գետաբերան (90)	Ամոնիում իոն, կոբալտ, երկաթ	3-րդ	4-րդ
			Մանգան, ալյումին	4-րդ	
		Աճանան (Նորաշենիկ)	3 կմ գյ. Աճանանից վերև (346)	Ամոնիում իոն, երկաթ, ալյումին	4-րդ
			Վանադիում	4-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, քարիում, ալյումին, ՀԼԱ	3-րդ	
			Նիտրիտ իոն, կադմիում, կալցիում, ծարիր	4-րդ	
			Մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, երկաթ, սուլֆատ իոն	5-րդ	
			Ամոնիում իոն, երկաթ, ալյումին, ԿՉՆ	3-րդ	3-րդ
	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	Ամոնիում իոն, երկաթ, ալյումին, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		3 կմ ք. Մխիանից վերև (100)	Մոլիբդեն, մանգան, վանադիում	3-րդ	3-րդ
		6 կմ ք. Մխիանից ներքև (101)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, վանադիում, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		0.5 կմ գյ. Արևիսից վերև (103)	Երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին	4-րդ	
